ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
АХАВНАТУНСКИЙ СЕЛЬСКИЙ
МУНИЦИПАЛИТЕТ

378343 գ. Աղավնատուն, Ն.Մաթևոսյանի պող. 25 ՀԵՌ. 0231 6 00 75

N Ա-087

2011թ Հուլիսի « 18 »

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱԿ ՄԱՐԶՊԵՏ

Կից ուղարկվում է Աղավնատուն գյուղական համայնքի ղեկավարի 2011 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությունը:
Առ դիր 4 թերթ

Հարգանքներով՝

Աղավնատուն գյուղական համայնքի ղեկավար՝ **Ա. Մաթևոսյան**

ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն գյուղ.
համայնքի ղեկավար Ա. Մաթևոսյանի
2011թ. 1-ին կիսամյակի կատարած աշխատանքների

Հաշվետվություն
Մասնակցությամբ՝ Արմավիրի մարզպետարանի ՏԻՄ և ՀԳՄՏԾ գործունեության համակարգման վարչության պետ՝ Ա Ղուկասյանի,համայնքի ավագանու և 128 համայնքի բնակիչների

15-07-2011թ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատուն գյուղական համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանցից բխող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով, « Տեղական ինքնակառավարման մասին »,«Իրավական ակտերի մասին», ՀՀ օրենքով, համայնքի ղեկավարի աշխատակազմի,ավագանու և գյուղապետարանի ենթակայանության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում՝ իր լիազորությունները:
2011թ. գյուղապետարանի աշխատանքային ծրագրի հիմքում դրված են եղել գյուղի սոցիալտնտեսական զարգացման գերակա ոլորտները:
Հիմնական նպատակը՝ համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացումն է, որին հասնելու ճանապարհին սահմանվել են կարևորագույն սոցիալ- տնտեսական խնդիրները, որոնք էլ անհրաժեշտություն է եղել լուծելու 2011թ. 1-ին կիսամյակի ընթացքում: Այդ խնդիրների լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել Արմավիրի մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի և համայնքի ավագանու ամենօրյա հոգատար վերաբերմունքը և համայնքի խնդիրների լուծմանն աջակից լինելու պատրաստակամությունը, որի արդյունքում արձանագրվել է որոշակի հաջողություններ, որոնք ըստ բնագավառների ներկայացնում եմ Ձեզ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Գյուղապետը աջակցում է համայնքի բնակչության գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև գյուղ. մթերքների իրացմանը:
Հետևողական աշխատանք է տարվում ոռոգման ջրի մատակարարման, ինչպես նաև կազմակերպվում է աշնանացան հացահատիկի բերքահավաք:
Գյուղն ունի իր առանձնահատկությունները:
Հիմնականում զբաղվում են հողագործությամբ և այգեգործությամբ և պտղաբուծությամբ:
Կան նաև չմշակված հողատարածքներ,որի հիմնական պատճառներն են՝
1. Հողասեփականատերերը բացակայում են համայնքից
2. Մեխանիզացիայի պակասությունը
3. Պարատանյութերի և թունաքիմիկատների բարձր սակագները և անորկությունը:

Ուշադրության կենտրոնում է պահվում աճեցրած բերքի իրացման աշխատանքներին, գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարի աշխատանքներին և պարբերաբար կատարվում է ներտնտեսային ոռոգման ցանցի մաքրման աշխատանքները:
Ներտնտեսային ոռոգման ցանցի ԾԻԳ ծրագրով նոր կիսախողովակների կառուցման աշխատանքների կատարման համար նախատեսվել է 22 միլիոն դրամ հատկացնել համայնքի բյուջեից:
Մարզպետարանից ստացել ենք մկնդեղ, որն էլ բաժանվել է բազմամյա տնկարք ունեցողներին կրծողների դեմ պայքարի նպատակով:
Անմիջական հսկողություն է իրականացվում անասնաբուժական ծառայության գործում՝ ժամանակին կատարվում է բոլոր տեսակի հակահամաճարաքային միջոցառումները կենդանիների հիվանդությունների կանխարգելման ուղությամբ: Կենդանիների շրջանում չի հայտնաբերվել ոչ մի տեսակի հիվանդություն:
Հետևողական և սիստեմատիկ հսկողություն է սահմանվում հանձնաժողովի կողմից առևտրի, հասարակական սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների գործունեության վրա: Ներկայումս համայնքում գործում է 6 առևտրի և 1 կենցաղային ծառայության օբյեկտ:

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Ամենօրյա ուշադրության կենտրոնում է գտնվում և օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում հողերի նպատակային օգտագործման,ինչպես նաև ապօրինի ընդերքօգտագործման վրա:

Սիստեմատիկ տեղեկատվություն է ներկայացվում անշարժ գույքի կադաստրի ստորաբաժանում՝ սեփականության իրավունքի գրանցման վկայականներում ճշգրտումներ կատարելու վերաբերյալ:
Ամենօրյա աշխատանք է տարվում հողօգտագործողների հետ հողի հարկի, գույքահարկի գծով գոյացած ապառքների հավաքագրման գործում:Բնակիչներին տեղեկացվում և ծանուցվում է «Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին» ՀՀ օրենքի պահանջները:

ՔԱՂԱՔՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Կառավարության սահմանած կարգով վերահսկողություն է իրականացվում համայնքի քաղաքաշինական գործունեության նկատմամբ:
Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և սահմանների ճշգրտման աշխատանքներ, տրվել են ճշտված իրավիճակային հատակագծեր:
Սիստեմատիկաբար կատարվում է խմելաջրի ջրագծերի վթարների հայտնաբերման և վերացման աշխատանքներ, 1-ին կիսամյակում անցկացվել է 550 մետր նոր ջրագիծ:
Սահմանվում է հսկողություն խմելաջրի որակի, ինչպես նաև վարակազերծման նկատմամբ:
Սիստեմատիկաբար կատարվում է աղբահանություն, այդ նպատակով հատկացված է տրանսպորտ՝ շաբաթը 2 անգամ:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքում գործում է 1 միջանակարգ դպրոց:
Աշակերտների թիվը 357:
Աշխատողների թիվը՝ 48-ը, որից՝ ուսուցիչներ՝ 33:
Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում է դպրոցը: Կրթության որակը գտնվում է բարձ մակարդակի վրա: Այս ուսումնական տարում շուրջ 12 աշակերտներ ընդունվել են ներկայումս սովորում են Հանրապետության պետական տարբեր բուհերում : Նախադպրոցական երկու խմբերի համար համայնքի բյուջեից 2.4 միլիոն դրամ ներդրում կատարել սենյակների վերանորոգման նպատակով:
Գյուղապետարանի նախաձեռնությամբ կազմակերպվել է տարբեր միջոցառումներ՝ մարտի 8-ի, ապրիլի 7-ի, մայիսի 9-ի և մայիսի 28-ի կապակցությամբ ծախսվել է 650.0 հազար դրամ :
Մշակույթի տանը տեղավորված է նաև գրադարանը, որը վերանորոգված և կահավորված է,ունի 11305 կտոր գրականություն:Գրադարանը մշակույթի հետ համատեղ կազմակերպել է տարբեր բնույթի միջոցառումներ, գրական ցերեկույթներ:
Մեծ ուշադրություն է դարձվում թոշակառուներին և երիտասարդության հետ տարվող աշխատանքներին՝ նրանց հանգիստը նորմալ կազմակերպելու նպատակով:
Կազմակերպվել է տարբեր միջոցառումներ՝ հանրապետության տոնի օրվան նվիրված, ծաղկեպսակներ է դրվել զոհված ազատամարտիկների գերեզմանին:
Ուշադրության կենտրոնում է գտնվում սպորտի զարգացումը,,գործում է բռնցքամարտի,կարատեի և մարտեր առանց կանոնների խմբակները:
Գյուղապետի ամենօրյա ուշադրության կենտրոնում է նաև առողջապահության որորտը: Բուժամբուլատորիայի նոր շենքի կառուցման համար համայնքի բյուջեից նախատեսվել է 5 միլիոն դրամ: Աջակցում է սանիտարահիգենիկ վիճակի բարելավմանը,հակահամաճարակային միջոցառումների իրականացմանը: Վերահսկում է առողջապահական հիմնարկի աշխատանքները:
Բուժ. ամբուլիատորիան կահավորված է ժամանակակից սարքավորումներով, համայնքի բնակչության բուժ. սպասարկումը գտնվում է բարձր մակարդակի վրա,ունի շտապոգնության մեքենա:
Համայնքում գործում է «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողով,որի հիմնական խնդիրը թափառաշրջիկ, անօթևան երեխաների հայտնաբերումն ու դաստիարակումն է:Ի ուրախություն մեզ համայնքում նման երեխաներ չկան, պարբերաբար դրամական օգնություն է տրվում երկկողմանի և միակողմանի ծնողազուրկ երեխաներին:
Ուշադրության կենտրոնում է գտնվում զոհված ազատամարտիկների և սոցիալապես անապահով ընտանիքները, որոնց տրվում ֆինանսական օգնություն: 1-ին կիսամյակում համայնքի շուրջ 27 սոցիալապես անապահով ընտանիքների, նորածինների երեխաների մայրերին և մահացածների ընտանիքներին տրվել է դրամական օգնություն 1845.0հազ. դրամի չափով:
Համայնքում հաշվառված են ընդամենը՝ 408 թոշակառուներ, այդ թվում 358 ծերության և աշխատանքային , 2-ը կերակրողը կորցնողի, 46-ը ՝ հաշմանդամության: Նպաստառու ընտանիքների թիվը կազմում է 81: Թոշակները և նպաստները տրվում են ժամանակին:

Համայնքի շուրջ 110 բաժանորդներ օգտվում են թվային հեռախոսակապից:
Համայնքում բարձր է պատասխանատվությունը զորակոչի նկատմամբ: Զորակոչից խուսափողներ չկան:
2011թվականի 1-ին կիսամյակում համայնքում կատարվել է հսկայածավալ աշխատանքներ:
Փողոցների ընթացիկ վերանորոգման համար ծախսվել է 1840.0 հազար դրամ:
Համայնքի փողոցների 60 %-ից ավել շերեներապատվել է
Մշակույթի տան դահլիճը կահավորվեց, բեմը և լուսամուտները նոր վարագույրներով, սենյակները նոր կահույքներով:
Մշակույթի տանը գործում է ժող. երգի-պարի, լատինաամերիկյան պարերի խմբակներ, ինչպես նաև դաշնամուրի, դիզայնի, արևելյան մարտարվեստների խմբակներ:
Կատարվել է ճանապարհների ընթացիկ վերանորոգում,կատարվել է խմելու ջրագծերի վերանորոգում:Այդ աշխատանքների համար ծախսվել է շուրջ 1500.0 հազար դրամ, համայնքը գրեթե 70% -ով գազֆիկացվել է (390 տնտեսություն): Լուսավորվել է համայնքի երկու կենտրոնական ճանապարհները:
Գյուղապետարանի օգնությամբ ամբուլատորիայի շենքում՝ մի սենյակը վերանորոգվել է մոր և մանկան «հանգստի սենյակ» անվամբ:
Շարունակվում է եկեղեցու կառուցման շինարարական աշխատանքները:
Համայնքի տնտեսությունների թիվը ՝ 930, բնակչության թիվը 3487 մարդ, գյուղատնտեսության մեջ զբաղվում են՝ 1760 մարդ:
Առաջին կիսամյակի ընթացքում համայնքում ծնվել են 15 երեխա, մահացածների թիվը ՝ 11:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2011թ.1-ին կիսամյակում հավաքագրվել է եկամուտներ՝

հազար դրամ

N	անվանումը	պլան տարեկան	2011թ 1-ին կիսամյակ		կատարողական %
			պլան	փաստացի	
1	հողի հարկ	8500.0	3200.0	2366.8	74.0
2	գույքահարկ	3500.0	1330.0	871.6	65.5
3	տեղական տուրքեր	100.0	50.0	61.6	123.2
4	տեղական վճար	50.0	25.0	9.9	39.6
5	ոչ հարկային եկամուտներ	2100.0	750.0	449.1	59.9
6	պատվիրված լիազորություն (անասնաբույժի)	600.0	300.0	-	-
7	պետ. բյուջեից տրամադրվող դոտացիա	35339.3	17670.0	17669.7	100.0
	ընդամենը վարչական բյուջե	50189.3	23325.0	21428.7	91.9
8	տարեսկզբի ազատ մնացորդ	32888.7	-	-	-
	Ընդամենը	83077.0	23325.0	21428.7	91.9

2011թ. 1-ին կիսամյակում կատարվել է ծախսեր հետևյալ ուղղություններով՝

հազար դրամ

N	ծախսերի անվանումը	պլան տարեկան	2011թ 1-ին կիսամյակ		կատարողական %
			պլան	փաստացի	
1	տեղական ինքնակառավարում	23975.0	11895.0	8051.8	67.7
2	Համայնք.այլ ծառ.	2335.0	2335.0	1202.9	51.5
3	աղբահանություն	1000.0	500.0	500.0	100.0
4	մշակույթ և ռադ.հեռ.հաղ.	8000.0	4000.0	2651.0	66.3
5	երիտասարդական ծրագրեր	2500.0	1600.0	650.0	40.6
6	Սոց. օգնություն	5000.0	2000.0	1845.0	92.3
7	անասնաբույժ. ծառ.	600.0	300.0	-	-
8	պահուստային ֆոնդ	6779.3	-	-	-
9	ֆոնդային բյուջե	32887.7	30887.7	306.9	1.0
	Ընդամենը	83077.0	53517.7	152076	28.4

«Քաղաքացիների առաջարկությունների, դիմումների և բողոքների քննարկման կարգի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջի համաձայն ,Աղավնատան գյուղապետարանում 1-ին կիսամյակի ընթացքում ստացվել է 30 դիմում:

Դիմումներում բարձրացվել են սոցիալական, ֆինանսական, հողային, շինարարության և այլ բնույթի հարցեր,որոնք սահմանված կարգով քննարկվել են և տրվել են պատշաճ լուծումներ:

Ընթացիք ժամանակահատվածում գյուղապետարանում ստացվել են 56 գրություն, հղվել է 77 պաշտոնական գրություն:Քաղաքացիներին տրվել է 568 տեղեկանքներ: Տրվել է շինարարության 2 թույլատվություն , 3 համայնքի ղեկավարի կարգադրություն և 13 որոշում:

2011թ. 1-ին կիսամյակի ընթացքում գյուղապետարանի աշխատակիցների փաստացի թվաքնակը կազմել է 11 մարդ, որից 7-ը համայնքային ծառայողներ, 3-ը սպասարկող և տեխնիկական աշխատողներ,8-ը «Կրթություն և մշակույթ միացյալ տնօրինության »աշխատողներ:

2011թ. 1-ին կիսամյակի դրությամբ աշխատավարձի և սոց վճարումների պարտքեր չկան:

2011թ. 1-ին կիսամյակի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 3 նիստ, որտեղ քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող տարբեր բնույթի հարցեր, և կայացվել որոշումներ:

Համայնքի ղեկավարի 2011թ. 1-ին կիսամյակի կատարած աշխատանքները գնահատվեց բավարար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Չնայած, համայնքի բյուջեով նախատեսված է սոցիալ –տնտեսական զարգացման և որոշ ուղղություններով իրականացված միջոցառումներ,սակայն կան հիմնախնդիրներ, որոնց լուծումը հնարավոր չէ իրականացնել միայն համայնքի միջոցներով:

ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ Է

1. Մանկապարտեզի շենքի կառուցում
2. Գազաֆիկացման աշխատանքները ավարտին հասցնելու համար որոշակի ֆինանսավորում
3. Ճանապարհների ասֆալտապատում
4. Խմելաջրի ջրագծերի վերանորոգում (անցկացվել է դեռևս 60-ական թ.թ.-ին), և մոտ 3 կմ նոր ջրագծի անցկացում:
5. Ամբուլիատորիայի նոր շենքի կառուցում :
6. Գյուղտեխնիկայի ձեռք բերում:

Աղավնատան գ[illegible]
համայնքի ղեկ[illegible] *Ա. Մաքևոսյան*